Ա. ՏԱՐԻ — ԿԻՐԱԿԻ 13 ՅՈՒԼԻՍ 1897 — Թիւ 14

ԲԱԺՆՈՐԴԱԳԻՒԹԻՒՆ
20 Թիւի համար
Վառնա . . . . . ֆր. 1.50
Վառնայէն դուրս . . . » 2
Արտասահման . . . . . » 2,50

ԿԱՏԱԿ

Գրութիւնք եւ չեն ղրկուիր։
Նամակ գրամ եւայլն ղրկել հետեւեալ հասցէին,
ՎԱՐՉՈՒԹԻՒՆ «ԿԱՏԱԿ»ի
Վառնա (Պուլկարիա)։

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ՀԱՅԵՐԵՆԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՀԻՆԳՇԱԲԹԻ ԵՒ ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ

Администрация на списанието
„ГАДАГЪ“
ВАРНА (България).

Հասարը 7 1/2 Սանթիմ

Administration du journal
«GADAG»
VARNA, (Bulgarie).

ԼԵՌԱՆ ՄԱՐԴԸ

Տակաւին խաբելու կ'աշխատին։

Յիմարութիւնը իւր գաղափարածայրը հասած էր։ Ամենին հիւղեղատի մը տակ մինչեւ կը դանուէինք ասկէ եօթը տարի առաջ. ո՞վ կարող էր նաղարարէ հեանի մը անունը մի քանի անդամ առանց եղբայրը խաչակնքելու ընդունը առնել, արտասանել։ Երեւակայութեամբ մոլեգնեալ դիւահար հոսանքին առջեւ մահուան դատակնիք մ'էր, որ իսկոյն ճակատիդ կը փակցնէին, յորմէ յետոյ ալ դաւաճան մ'էիր, մատնիչ մ'էիր, այս էր հաւատը։ Կեղրոնը որոշած է, կեդրոնը հրամայած է. Աստուածային պատգամն էր. և ի՞նչ անմեղներ, սուրբերէն աւելի սրբամիտ հայրենասէրներ՝ զոհ չը դացին այդ դիւահոգի կեդրոնի պատգամներուն, հաճոյքներուն։

Տարիները գլորուեցան, դիմակները վար ինկան, աննկարագրելի ոճրագործութեանց լեռնակոյտեր մեր աչքին առջեւ կը տեսնենք այսօր ու չենք սոսկար տակաւին երբ ճշմարտութիւնը կը դայ խարազանել Մ. ոճաբի աւազակները։

Քանի որ զրպարտութիւն կուգային հրաչակել ասկէ եօթը տարի առաջ, այսօր ալ նոյնը կրկնողներ կը գտնուին. տրխմարնե՛ր, որ միեւնոյն բանը հոլովելու կ'աշխատին։ Իսլիմիայի դիւամիտ նամակի պարունակութիւնը՝ վերը ըսածներուս մէկ նմուշն է. ամ՛թ, հազար ամթ այդ տեսակ միտք ու հոգի ունեցողներուն։

Ասկէ ճիշդ եօթը տարի առաջ ալ մատամ Ա.ի տասը հազար ըսուլլին շրջելու դիւրութեանը համար ըսողներ եղան թէ՝ Զաքրբեան Սուլթանէն կաշառուած լրտես մ'է։

Տասը հազար ըսուլլիները հալեցան կարդ մը պուտուտաքսս ու սուտ գործիչներու կոկորդին մէջ և տղնիւ Տիկինը կարծեմ համոզուեցաւ թէ՝ Զաքրեան Սուլթանէն կաշառուած լրտես մը չէ եղած։

Վառնայի գաղթականներուն հաւաքածոյն՝ ծայր ու ճոթ, Հայաստանցի զաւակը դիտէ ու կը վկայէ որ Իսլիմէացիներուն մնացումը զրպարտութենէ աւելի բան մ'է — անբարոյականութիւն է։

Եթէ խաբել չէ միաբերնին բայ անուամբ և յայտնի հաշիւով երեւան թողդան, սուտն ու կեղծը, նենդութիւն ու դաւը մէկ կողմ թող ձգեն և հրապարակ

ելնեն. այս է միութեան պայմանը, այս է հաշտութեան պայմանը։ Անցեալի մասին չեն ուզեր որ խօսուի, որովհետեւ անոնք անցած են եղեր, 50,000 որբերը կատուի ձագեր են եղեր և 300,000 հայ դիակները ճանճեր, կամ ճճիներ. պէտք է ուրեմն սպառել նոր յիսուն հազարներու, նոր երեք հարիւր հազարներու, այս ամենուն հետ դեռ երես սպունին ու նոր սիրբէնոյ խաբել կուզեն խեղճ հասարակութիւնը։

«Կատակ»ի կամ ապագայ «Ցաւրոս»ի դէմ հալածանքը սկսուած կը տեսնուի, ինչպէս կը տեսնուի Իսլիմէացի մտքերէն. արդէն մէկ երկու քաղաքէ ալ այդ տեսակ լուրեր առնուած են որ կ'աշխատին խեղդել հշմարտութիւնը, ծածկել երդութիւնը ժողովուրդի առջեւ ու նորէն առիթ դտնել խաբելու։

Այդ կարգի կարճամիտներուն իմաց կը տանք թէ՝ զուր կ'աշխատին, զի ժողովուրդը սկսած է իր աչքի կապը քակել. կարդացէ՛ք բաց նամակները, Պալչիզի հանրագրութիւնը և դեռ շատեր։

Ինչպէս «Կատակ»ը՝ նոյնպէս և «Ցաւրոս» պիտի լինի ժողովուրդին օրկանը, ազատ ամեն կերպ կուսակցական ոգիէ, մտրակ մը, խարազան մը ձաղկելու համար ղեղծումները — ժողովրդեան թշնամին ո՛վ որ ալ ըլլայ, Թուրք թէ Սուլթան, իշխան թէ կղեր և կամ կաթողիկոս ու հայրապետ։

Յ. ՉԱՔՐԵԱՆ

ՓՈՔՐԻԿ ՆԱՄԱԿՆԵՐ

Ե

Շոդենաւի վերայ կային մի քանի հայեր և նոցա խօսակցութիւնից երեւում էր որ նոքա Հայաստանցիներ են։ Մէկի դէմքն ինձ ծանօթ էր։ Մօտեցայ և ճանաչեցի իմ անցեալ նամակումս յիշած Մշեցուն։ Սովորական բարեւներից յետոյ, յիշեցրի Թիֆլիզի մեր խօսակցութիւնը, որի մէջ ես թարգմանի դեր էի կատարում։ Նա սկզբում ուրախացաւ, որովհետեւ իմ այն ժամանակուան ուղեկիցս ապագայում դարձաւ Հ. Յ. Դաշնակցութեան «մեծ» հերոսներից մինը և Մշեցին կարծեց ես էլ այդ հերոսի հետեւողներից եմ և ուղղակի հարցուց—Մերո՞նցից ես։ Ձերոնք ո՞վքեր են։ Դաշնակցականներ, Ո՛չ ես հայ եմ ասացի ու իմ խօսակցիս դէմքը մնայլուեց։ Դու յեղափոխական չե՞ս։ Ուրեմն դաշնակցականներից զատ ուրիշ յեղափոխականներ չը կա՞ն։ Ապա՛ Հնչակեաններ։ Նոքա լրբեր են. նոքա կեղրոնացման դրութիւնն ընդունած։ Անկաշխս չէի հաւատում։ Ես կարծեցի սխալուել եմ, իմ առաջս նստած է ոչ թէ նախկին միամիտ Մշեցին, որը երբեմն ասում էր թէ թօփ ու թուֆանք չունենք տաճկի, քրդի հետ կռուելու, այլ Թիֆլիզի բաղդախնդիր «գործիչներից» մէկը և կամ Կ. Պոլսի շատախօս — թեթեւսօլիկ վահդէներից — վարազներից մինը։ Բայց չէ ես սխալուած չեմ, սա դէմքով նոյն Մշեցին է և չը նայելով գործ դրած ամբողջ աշխատանքին մեծ-մեծ բաներ արտասանելու համար, Տարնոյ «իմաստը» նրան մատնում էր։

Այո՛ մեզ հարկաւոր է ապակեդրոնացման դրութիւն, շարունակեց իմ Մշեցին, պէտք է կռուիլ միւս կուսակցութիւնների դէմ, նոյն իսկ սպանել, եթէ պէտք լինի.... Բայց տաճիկն ու քիւրտը, համարձակեցի հարցնել։ Մեր գործը նոցա հետ չէ, այլ կառավարութեան ներկայ դրութեան հետ։ Տէր Աստուած, սա ժանեցի է և ոչ թէ Մշեցի։ Քանի՞ տարի է երկրից դուրս հեռանալ։ Թիֆլիզ տեսնուելուց յետոյ, էլ չեմ դնացել։ Ի՞նչ գործով կը պարապես։ Ես յեղափոխական

եմ։ Երկրից տեղեկութիւններ ունի՞ս, նամակ կստանա՞ս, ստակ կը խրկե՞ս։ Այդ մանաւոր գործեր են, յեղափոխականին ամթի է այդպիսի բաներով զբաղուիլը։ Հարկաւոր է կռուիլ։ Ո՞ւմ դէմ։ Հակառակ կուսակցութիւնների։ Բայց երկիրն աւերուած է, ժողովրդի մի մասն կոտորուած, իսկ մնացածները այսօր չէ վաղը կը կոտորուին։ Ի՞նչ անենք յեղափոխութիւն այդպէս է պահանջում.. ..։ Մի՞աբդ է, դու երբ նոր էիր եկել Թիֆլիզ, ասում էիր տաճիկ, քիւրդ զինուած են, իսկ հայերս կոտորած դանակ էլ չունինք, այս քանի տարուան մէջ ձեր Հ. Յ. դաշնակցութիւն շատ զէնք տարա՞ւ երկիրը։ Ոչ, մենք Հայդուկներ դրկեցինք, մի քանի մատնիչներ, հարուստներ սպանեցինք։ Բայց Մշեցին առանց զէնքի մնաց, եկան քրդեր կողոպտեցին։ Ուրեմն դու յեղափոխութեան դէմ ես հարցեց ինձ նախկին Մշեցին իսկ ներկայ Ժենեւցին։ Բն երկրում յեղափոխութիւն չը կար և չը կայ, այլ կար անտէր, անզէն ժողովուրդ, որին ձեր 8 հայդուկներն պատճառաւ, որոնք այժմ ազատ քէֆ են անում, եկան տաճիկներ և քրդեր կոտորեցին և թշնամու քիմն իսկ չարիւնեց։ Ներկայ Ժենեւցին նայեց ինձ արհամարանքով և և ասաց, ապա՛ ի՞նչ կարծէիր, յեղափոխութիւն առանց արեան կը լինի՞.....։

Թողի հեռացայ։ Այո՛ Ժենեւի բիւրօն և Լոնտոնի կեդրոն իրենց գործերը կատարեցին։ Նոքա Կ. Պոլսից մինչեւ Աղբակ անզէն անպաշտպան ժողովուրդ կը բակի, սրի մատնեցին, իսկ երկրից դուրս պարարտացին բաղդախնդիր, ծոյլ, աշխատանքից փախչող և բարոյապէս ընկած յեղափոխական կուսակցականներ որոնք մնացան ամեն ինչ և սկսեցին միմիանց հետ կռուել ուտելու համար։

Եթէ ընթերցողը կասկածում է իմ ասածներիս, թող մտնէ Վառնայի, Ռուսճուկի սրճարանները, այդպիսիները, ինչպէս իմ ծանօթ Մշեցին, հարիւրաւորներ են...։

Լ.Ի.Օ

Պալչիք 7/19 Յուլիս 97.

Կը խնդրուի «Կատակ»ի պատուարժան եւ ազգօգուտ խմբագրութենէն, որ հաճի մի անգիւն շնորհել մեր ազգօգուտ յայտարարութեան։

Բաց նամակ եւ յայտարարութիւն Յեղափոխական բոլոր վարիչներու։

Հայկական յեղափոխութիւնը սկսելէն ի վեր ամենուն տիրան ի թունդ հանեց, և իրենց մէջ ծագեցաւ անձնական վէճեր։ այն տեղն բաժանումներ եղան։ մեր Ազգային Դատին հիմերը դղրդեցան և ահա այն ժամանակ ծագում առաւ մեր կացութեան ամենադժբաղդ վիճակը, ոչ միայն պարագայներու աննպաստութիւնը, այլեւ նոյն իսկ մեր կուսակցութեանց իրար դերազանցելու և ժողովուրդին աչքը շլացնելու կրկնակի և անձնական ցոյցերով, որ մեզ հասցուց այս ամենաանտանելի կացութեան։ Մենք հիմա բոլորովին համոզուած լինելով որ չէ կարելի փրկուիլ այս տեսակ անլատեալ դժերով, այլ միայն ճշմարիտ հայրենասէրներու միացմամբ, այսու որոշած ենք մեր յարաբերութիւնները բոլորովին խզել ամեն կուսակցութիւններուհետ և մենք ստորագրեալքս տեղացի և պանդուխտ, բացարձակապէս կը յայտարարենք թէ չենք ընդունիր ոչ մէկ կուսակցութեան ներկայացուցիչ կամ դրամահաւաքիչ, այս կամ այն կուսակցութեան կողմնակ։ Բարեբախտ ենք թէ առաջինը կը հանդիսանամք այս մասին և լիայոյս ենք թէ մեր այս ճշմարիտ օրինակին ընդհանուր Ազգութիւնը պիտի

հետեւի, որով պատճառ պիտի ըլլանք ճշմարիտ հայրենասէրներու միացման, Հայկական Դատին այս ամենատուգնապալի միջոցին. վասն զի (Ձեզ փերկոութիւն առանց Ընդհանուր Միութեան), այլ ամէթ և նախատինք անոնց որոնք կ'ուզեն արգելք ըլլալ այս ամենասուրբ և ցանկալի Միութեան. անէծք և հաղար անէծքներ թափին անոնց գլխուն և սերունդէ սերունդ յիշուին վատակներու նման. իսկ դուք, պաշտելի և ամենաճշմարիտ հայրենասէրներ, կուսակցական և թէ չէզոք անհատներ, կը խնդրեմք, կ'աղաչեմք և կը պաղատիմք Ձեզ ի սէր հայրենեաց և ազգութեան. ալ ո՞ր ժամուն կ'ըսպասենք, ա՛լ աւելի տագնապալի օրեր կ'երեւակայէք որ Ձեր հայրենասիրութիւնը նուիրէք. ո՛չ, ո՛չ, չի կայ ժամանակ։ Սգաւոր Մայր Հայրենիք Ձեզ կ'ըսպասէ, պէտք է բոլորիք Հայրենիքի Միութեան Սուրբ Սեղանի շուրջը և այն ատեն ոչ միայն մեր ղրամը այլ եւ մեր կեանքը Ձեր հրամաններուն պատրաստ է։

Յաւէժ կեցցէ Ընդհ. Միութիւն։

Եւ բոլորովին կործանում կուսակցութիւններու։

Յ. Գ. — Սոյն յայտարարութեան մի պատճէնը ղրկուած է նաեւ «Իրաւունք»ի խմբագրութեան։

ՍՏՈՐԱԳՐՈՒԹԻՒՆՔ

Պետրոս Տէրտէրեան. — Լեւոն Փանոսեան. — Յովակիմ Գրիգորեան. — Յարութիւն Մինասկէօզեան. — Մուրատ Թորոսեան. — Սբիր Նիքոլեան. — Ե. Մաղբմեան. — Պետրոս Յակոբ. — Վահէ Անդրէասեան. — Մկրտիչ Գարոնեան. — Ալիքսան Քղեցի. — Կիրակոս Սրապեան. — Սէրգիս Կարապետեան. — Մինաս Կէտիկեան. — Մարտիրոս Քղեցի. — Գասպար Սընտոեան. — Պետրոս Նորեան. — Օհաննէս Մանուկեան. — Օհաննէս Նիկողոսեան. — Խաչիկ Սարգիսեան. — Մօրկան Գէորգեան. — Յակոբ Յովհաննէսեան. — Բ. Ղուկասեան. — Լեւոն Տէմիրճեան. — Սարգիս Բալթեան. — Թորոս Սարգիսեան. — Պետրոս Յովհաննէս. — Աշոտ Պողոսեան. — Կարապետ Գասարճեան. — Մինրան Էպէեան. — Գրիս Սինեմ. — Պապիկ Խաղարեան. — Սարգիս Գուլումճեան. — Պետրոս Յովհաննէսեան. — Պետրոս Քիւրճեան. — Գասպար Հայրապետեան. — Խաչատուր Երեմեան. — Մինաս Աւետիսեան. — Մարկոս Կարապետեան. Մարգիս Խաչիկեան. — Աւետիս Տէր Պողոսեան. — Անտոն Անտոնեան, եւն. եւն. եւն։

Տեղւոյ անձկութեան պատճառաւ տարուեցանք ստորագրութեանց մէկ մասը չդնել որոնք 75ի կը հասնին։

ԹՈՒԱՅ ՊԻՐ ՄԷՖԹՈՒՊ

—o—

4 Յուլիս 1897 Սիվէն

Սիրելի պարոն

Վառնայ

Պիր գաչ թիւ կատակ լրագիր կէօնտէրիյօրսունուզ սիզի իչիւն Սիվէնտէ բուժանորդ պուլամատըմ, ըէճա խաէրիմ կէօնտէրմէյինիզ, սեպէպի Սիվէնտէ հայ ժողովուրդ արասընատ մնքպուլա կէջմէտի, չօղլաբը սեպէպ թուլթայօրլար հայ գործիչլէրինէ գարշը մայմատ սուրէթտէ եաղըլըշլար օլատուղու իչիւն, վէ քիմիսի շիւփէ խաէրէք ատէյօր քի, պուլրադիր օլապիլիր Սուլթան Համիտ թագիընատան, գասթըրտթըրըլը.յօր քէ պու գատար քրիթիքա խաէրէք եաղըլը.յօր, օլապիլիր Սուլթան տախի թէրճիւմէ խոթիրտիզի վագրթ նարկուլէսինի տահա չէրէֆլի իշթահ իլէն իշէճէքթիր. վէ քէֆ տույահատրթըր ատէտի պիւթիւն հայլարըն ազգընատ տըր մայիմնթ վէ ինիյօրում։ ԹԱՋԻԿ Յ. ԹՕՀԱՖՋԸԵԱՆ

Պարատէքի հաղրգաթէն թօաֆ մէքթուպճրղազը օգուտանլարըն տրդգաթ վէ մուհաքէմէլէրինէ իհալէ խաէրիզ։ Անճաղ չու գատար տէրիզ քի պիզ Իսլամիա ֆապրիգասընն ալա բանթօլօնլրդ չայադ չրդարբր օլտրդնը պիլիրտիք, մէկերչի գաֆա չայադը տախի չրդարբր ըմըշ։ Պուալօ պէ։ Իսլամիա ֆապրիգա չրրադլարը պու չայադլա միւղէյեէն գաֆալարլա մէչհուր պիւրօյա տիրէքթօրլրդ տախի խէպիլիրլեր։

Отговорникъ: П. Глушковъ.

Печатница К. Николовъ.—Варна.